

Հոկտեմբերի 7-ին Հայաստանի ազգային գրադարանում նշվեց գրադարանավարի օրը: Միջոցառումների շրջանակում վարչական մասնաշենքի մամուլի ընթերցասրահում տեղի ունեցավ Ակսել Բակունցի կիսանդրու բացման արարողությունը: Արձանը տեղադրվել էր Ազգային գրադարանի բարեկամ, քաղաքական գործիչ Սուրիկ Խաչատրյանի հովանավորչությամբ: Վերջինիս Ազգային գրադարանի տնօրենը Հայ տպագիր ժառանգության արժևորման, հայրենի բնաշխարհի մեծանուն արձակագիր Ակսել Բակունցի գրական ժառանգության հանրահռչակման գործում ունեցած ավանդի և ներդրման համար պետական ու հասարակական գործիչ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄ», Սուրիկ Խաչատրյանին պարգևատրեց «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով: Այնուհետև թամանյանական մասնաշենքի դահլիճում տեղի ունեցավ միջոցառման հանդիսավոր բացումը: Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական միության նախագահ Ժաննա Թորոսյանը պատվոգրեր և դրամական պարգևներ շնորհեց Ազգային գրադարանի փոխտնօրեն Հայկանուշ Ղազարյանին, արվեստի և ոչ գրքային հրատարակությունների բաժնի վարիչ Աիդա Ադամյանին և գլխավոր մատենագետ Անահիտ Հովհաննիսյանին: Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը և Արևիկոյի նախագահ Սրբուհի Կիզիրյանը մի խումբ աշխատակիցների պարգևատրեցին պատվոգրերով:



